



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՇՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

«ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ»  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ  
ՊԱՐՈՆ Փ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ


Հարգելի պարոն Թադևոսյան

Ի պատասխան Ձեր 04.09.2016թ. թիվ 035 գրության՝ հայտնում ենք հետևյալը.

Հարկային մարմնի կողմից հաշվետվությունները օրենքով սահմանված ժամկետից ուշ ներկայացնելու կամ չներկայացնելու դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգրք) նախատեսված վարույթները հարուցվում են բացառապես 37-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումը կատարելուց հետո երկամսյա ժամկետում: Նշված գործընթացը կանոնակարգելու համար ընդունվել է նաև ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ) նախագահի 2016 թվականի օգոստոսի 4-ի թիվ 144-Ա հրամանը, որի դրույթներով կանոնակարգվել են հաշվետվություններ չներկայացրած հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման ընթացակարգերը, ինչի նկատմամբ խստագույնս հսկողություն է իրականացվում ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս մարմնի հսկողական գործառույթներ իրականացնող ստորաբաժանումների կողմից:

Միաժամանակ, հարցի կարգավորման առումով կարծում ենք կարևոր նշանակություն ունի հարկ վճարողների կողմից վարչական վարույթի հարուցումների վերաբերյալ ծանուցում ստանալու դեպքում համապատասխան վարույթ իրականացնող մարմին ներկայանալը, ինչը հնարավորություն կտա Օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված վաղեմության ժամկետի լրացած լինելու, ինչպես նաև իրավախախտման դեպքի բացակայության դեպքերում բացառել վարչական վարույթի իրականացումը՝ հիմք ընդունելով Օրենսգրքի 247-րդ հոդվածի դրույթները:

Իրավաբանական վարչության պետ



Ա. ՄԱՅԱԿԱՆՅԱՆ

???? ??????????  
Sep 13 2016 1:08 PM